

## ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՈՂՄԱՑԻՆ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՍՎԱԾՆԵՐՈՒ ԶՈՀՐ

Զոհ մատուցանելու սովորությունը  
ծանօթէ մեզ քրիստոնեական շրջանի մա-  
տադի սվորութենեն:

Մատադի սովորության ծագումը հրեա-  
կան է: Հին կտակարանի մեջ կկարդանք  
կենդանիներ, պատուզներ ու բերքեր նվիրե-  
լու հնագանդ սովորությունը:

Դեկտացվոց գրքին մեջ կկարդանք հե-  
տելալ բառերը. «Արշաններեն, ոչխարինե-  
րեն կամ այծերեն անարատ արու պիտի  
մատուցանե, որպեսզի ձեզի համար ընդու-  
նելի ըլլա: Եթի զգարակ կամ այժ կամ  
ոչխար ծընի, յոթ օր իր մոր քով պիտի  
մնա. ութերորդ օրը ու անկե ետքը տիրոջը  
ընդունելի պետք է ըլլա պատարագի ըն-  
ծայի համար:

«Եվ կովը կամ ոչխարը իր ծագով մեկ  
տեղ մեկ օրվա մեջ չմորթեք»: (Տես գլուխ  
իթ—19, 27—28):

Ինչպես նաև կկարդանք. «Բուն երկ-  
րիդ առաջին երախայրիները քու Տեր  
Աստուծուց տունը տանիս» (Գիրք Ելից):

Հին հայերը թե հեթանոսական ու թե  
քրիստոնեական դարերուն հետևած են վերի  
սովորության:

Քրիստոնյա Հայաստանի շատ մը սովո-  
րությունները շարունակությունը ըլլալով  
հեթանոս Հայաստանի վաղեմի սովորու-  
թյանց պետք ենք լրջորեն հետևել անոնց  
ու քննել:

Կենդանիներու զոհի մասին հինգերորդ  
դարուն ապրող Հովհանն Մանդակունին իր  
«Ճառք»-ին մեջ հայ զոհերու իր նյութ  
կհիշե «խաչն ու ոչխար, ցուլ և եղ»:

Խել Շ-րդ դարսւ նշանագոր գրողներեն  
Զենոր Գլակ իր «Պատմութիւն Տարօնոց»

երկին մեջ կավանդե, որ Տրդատ Մատաղ  
ըրավ սպիտակ զգարակաց, հովագներու,  
գառներու բավական բազմություն մը: Մա-  
տադի անասունները պետք էին սպիտակ  
ըլլալ, որ հնադայն սովորությունն էր  
Հայաստանի հեթանոսական մատադին:

Դարենքերդ կը պատմե, որ հին հել-  
լենները իրենց զոհերուն համար ծխական  
խորություններ ունեին: Ակլորները սպի-  
տակ անասունները պետք էին արու ըլլալ,  
ինչպես հրեաների մեջ. հույները ևս նույն  
խորությունը կղնեին, բայց միջին դա-  
րում հայկական զոհերը կրնային որձ կամ  
էկ ըլլալ, կըսեն Տարօնացին ու Շնորհա-  
մին — «արս կամ էկ անփոյթ իջեար» կըսե  
Շնորհալին (աևս «Թուղթ ընդհանրա-  
կան»):

Հաս Մանդակունին բոլոր զոհերը  
պետք էին ըլլալ «գեր ու ուղիղ», որպես-  
զի «զանօպուտն և գվտիտն» աղքատներուն  
նվիրելու չստիպենք: Մանդակունին կը-  
հետեւ Գրիգոր Տաթևացին, որ իր «Գրիգո-  
ր Հարցմանց»-ին մեջ կըսե, թե զոհերն  
պետք են ըլլալ ընտիր ու գեր:

Զոհի անասունը պետք էր արդար  
վաստակի արդյունք ըլլալ ու ոչ հափշտաց-  
կության ու գողության արդյունք, այս-  
պես «պիղծ» պիտի համարվեին, կըսե  
Մանդակունին իր «Ճառք»-ի մեջ էջ 58: Ու  
«Բացօթյա պիտի ձգվին որպեսզի չներու  
կեր ըլլան» կըսե 12-րդ դարու նշանակոր  
հայ վարդապետ մը՝ Դավիթի իր «Կանոնք»-  
ին մեջ:

Ինչպես որ անսանք, մատադի կամ  
նվիրի նյութը միայն անասունները չեն,  
այլ նաև ուտելի ու ըմպելի նյութերը ևս  
կրնային ընծայարերին:

Մանդակունին, Սահակ Պարթևը ու  
Տարոնացին կվասառեն այս պարագան:  
Մանդակունին կթմէ «Կալոյ Հնձանի» նմեր-  
ները: Սահակ կխոսի «Պառող յամենայն  
արժտեայց, առաջին արժտեայց, այսինքն  
յշնարոյն, զի զեղցին կալք ցորենոյ և լի-  
չոյց բառերով: Խոկ Տարոնացին իր  
«Թուղթ առ Թեոփիտաէշ»-ին մեջ կըսէ,  
թե այս առիրությունները իր օրոք կա-  
յին ու ընդհանրացած էին Հայոց մեջ «զի  
ամենայն պաղսին տան զարարագս Առ-  
տուծոյ»:

Ճին հույները, Ֆոխատացիները և Հար-  
մայեցիները իրենց երկին պառողը նվի-  
րած են աստվածներուն:

Երբեմն դիմին ալ իբր բերք կնիլիր-  
վեր: Հայերն ալ ունեցան այս սովորու-  
թյունը, որ կվասովիլ 1345-թվականին Սիս  
մայրաքաղաքին մեջ գտնված Հին Մաշտո-  
ցի մը «Օրհնութիւն»-ն, դրված Հայոց  
կոստանդնուպոլիս: Թագավորին օրով 1344—  
1363, որ որդին էր Նորյան ցեղեն Պաղ-  
տին Մարածախոտին:

11-րդ դարում դրված ուրիշ Մաշտոց  
մալ ունի հետեւյալ օրհնությունը, ուր  
հիշատակություն կրնէ դիմին: «Աւրհնեալ  
և Տէր Աստուած, արարիչ ամենայն արա-  
րածոց, առաքեա զշնորհս Հոկւոյդ սրբոյ  
ի վերայ սեղանոյս այսորիկ, որ առաջի  
եղեալս կայ, աւրհնեա զհացս զայս և  
զգիմիս, զի որք կերպեն և արբցեն ի սմա-  
նէ, եղիցի նոցա ի սրբութիւն և ի քառու-  
թիւն մեղաց, ի կենդանութիւն և ի փրկու-  
թիւն անձանց, բարեխաւսութեամբ ամեն-  
այն սրբոց վկայից քոց»:

Դիմին նմիրումը կատարյալ հեթանո-  
սական էր ու այդ պատճառով մեր առա-  
ջին վարդապետները հետեւեցան այս սովո-  
րության: Հելլեններն ալ գործածեցին զի-  
նին: Հոմենրոսի «Էլիականին» մեջ կհամուշի-  
ովինք Աքելլես մեծ դյուցազնին, որ զետե-  
նր դիմի կիմափեր, մինչ կայրեր Պատրոկ-  
լիսին մարմինը անդ, էջ 416:

Զոհ մատուցմեներու մասնավոր կա-  
նոններ գոյություն ունեին: Տաթեացին  
կավանդե հետեւյանմերը.

Պետք էր զոհը մորթողը ըլլար «արու»,  
աշխարհական, հայատացյալ անձ մը: «Կի-  
նը, ներքինին, անհավատը, արյունահեղը  
ու քահանան չէին կընար անասուն մոր-  
թել: Որովհետեւ, կըսէ Տաթեացին, կինը  
ու ներքինին անկատար մարդկի են, ան-  
հավատն անարժան է, ու քահանային հա-  
մար անսպատիլ էր արյուն թափիլ: Զոհ-  
ված անսպատիլ պետք էր ըլլար «կենականի,  
ոչ մեռած», պետք էր ունեցած ըլլար  
արյուն, չունչ ու ջերմություն, այնախս  
ով եթե կատարելապես պաղած ըլլար, ու-  
տեւի չէր կրնար համարվիլ: Մորթելու  
գինքը պետք էր ըլլար սուր երկաթյա գոր-  
ծիք մը ու ուրիշ ոչինչ, որովհետեւ մյուս  
գինքերը չէին կրնար սուր երկաթի չափի  
արյունը քամել:

Տաթեացին դեռ կշարունակե, եթե  
այս պարմանները չի գործադրվին, «զեն-  
եալն պիղդ է, խոտան ու ոչ ուտելի»:

Զոհը ու անմանց ճաշերը քանի մը  
սովորներով տեղի կունենային: Նախ-  
նիք սովոր էին քրիստոնեական գթա-  
սիրության գաղափարով կամ Աստուծո-  
խոստացած ուխտերուն պատճառով կամ  
ննչեցյալներուն հոգիներուն պատճառով ա-  
նասուններ մորթել կամ ուրիշ կերպուր-  
ներ պատրաստել ու բարձաթիլ հավատաց-  
յաններ հրավիրելով անոնց կերպակուր մա-  
տուցանել:

Այս կարգի ճաշերը մատաղ կկոչվին:   
Հրեաններն ալ ունենին նույն սովորությու-  
նը: Մատաղը երբեմն կոչված է նաև «զա-  
տարակալ»: Այս բառը առնված է հին կտա-  
կարաններ ու կննակե իբր նվեր առ Աս-  
վածածած: Մատաղը երբեմն կկոչվեր նաև  
«զենում» թրբ այլոց համար անասուն մոր-  
թելու սովորություն, ուսկից կկոչվի նաև  
«Պատարագ զենաման»: Այս բառին կհանդի-  
պինք Միսիթար Գոշի առակներուն մեջ:

Զենումը կհիշվի նաև Հովհան Մանղա-  
կունիին կողմէ ու Տարոնացիին «առ Թեո-  
փիտաէշ» գրած թուղթին մեջ, որ գրված  
էր 11-րդ դարուն: Ներսէս Շնորհալին ալ  
գործածած է զայն իր «Թուղթ ընդհան-  
րական»-ին մեջ:

Երբեմն պատարագ կամ զենում բառերը որակված են նախ իր «ողջակեզ» (Զենոր Դլակ), որ միայն հրեական սովորության մը իմաստը ունին, որովհետեւ հայերը կիզելու սովորություն չունեին:

Պատարագ ու զենում բառերուն տեղ էին երլ գործածած են նախ «աղապաց» բառը, որ հունարեն «աղապիթ» բառեն ծագած էր ու կոչանակեր սէր ու ողորմություն ու շատ հարմար էր մատաղներու առթիվ գործածվելու:

Միթքար Գոշ այս բառը կհիշե «յարուրս աղապիթ», իսկ Գրիգոր Տաթիացին զայն հիշած է «աղապաց մատաղաց» բառերով: «Աղապ» ու «Պատարագ» բառերուն զանազանությունը կրացարարվի Ներսես Աշտարակեցին Դիլինի Բ. ժողովին «Կանոններուն» մեջ, բայց զանազանությունը դրված էր նախատակին մեջ ու անոր արարչական հանգամանքներուն մեջ: Աղապը կներկայացնե բուն իսկ ողորմության ճաշը, «որ պետք էր միայն կարույաներուն տրվեր, իսկ պատարագն կամացաներ իբր եկեղեցականաց բաժին: Հովհան Մանդակունին ալ մասամբ համաձայն է այս զանազանության, երբ կիրատե, որ պատարագը խառն տրվի թե քահանային ու թե կարույաներուն, իսկ աղապը տրվի լոկ կարույաներուն, կամիւլցներ Աշուարացին: «Քահանայք յագապս մասունք. մի բարձցին ըստ հրամանի կանոնաց, այլ աղապտաց տացին ի նմին (օքնելու) ժամունակամաց աղապաց տեսանն»:

Այս փաստերը ցույց կուտան, որ հին հայերը մատաղը կհամարեին պատարագ, զենում, ու աղապ, որ պետք էր բաշխվեր եկեղեցականերուն ու Աշուարացներուն համահավաքար:

Հեթանոս Հայուսունին ալ սովորությունը նույն էր: Հայ քուրմերը զոհին կարեւը մասը առնելին վերջ կրնային մաս մալ բաժին հանել կարույաներուն:

Հեթանոս Հայուսունին զատ, հեթանոս Հունաստանի ու հեթանոս Հոռմի մեջ ևս կային զոհի առթիվ կրոնական հաշեր,

որոնք այլև այլ առիթներու մեջ կըլլային ու ի ժամավորի մեծ հաղթանակներն վերջ:

Աղաթանգեղոս կպատմե, որ Մեծն Տրդատի հայրն Խոսրով, երբ պարսից Արտաշեր թագալորին դեմ տարած էր փառավոր հաղթանակ մը, Հայաստանի պաշտամունքի վայրերում մեծարեց սպիտակ ցուլեր, նոխաղներ, ճիկր ու ջորիներ:

Նույն սովորությունը կտիրեր նախ խողօք առատացոյց զզուս կրակին (Եղիշե): Թե պարսից Հաղկերտ թագավորը իր հաջորդներուն համար կրակին զոհեց սպիտակ ցուլեր ու գիտավոր նոխաղներ: «Յազկերա... ցլուք սպիտակօք և գիտաւոր նոխաղօք առատացոյց զզուս կրակին: Եղիշե:

Հեթանոսական այս հին սովորության բարեգործական մասը մուտք գործեց քրիստոնեության, մեջ ու նույնացալ պատարագի իմաստին մեջ: Հին ժամանակները քրիստոնյաները միասին կճաշեին, յուրաքանչյուր անձ իր կերակուրը եկեղեցին կրերեր:

Պողոս առաքյալին Կորնթացվոց թուղթերուն ու գործք Առաքելոցի ընթերցումներուն մեջ կանգիպինք հետեւյալ տողերուն: Առաջին թուղթ Կորնթացվոց «Երբ մեկտեղ կժողովմիք եկեղեցին մեջ, ուտեւու ատեն ամեն մեկը առաջ իր բնթորիքը կանոն (21), Եղբայրներս, երբ մեկտեղ կժողովմիք ուտելու, իրարու սպասեցեք»:

Գործք Առաքելոցին մեջ կկարողանք, որ Պողոս Առաքյալ եղանակոս անուն մենածագուարը կենդանացնելու համար դերի սենյակը ելավ ու հացը կտրելով ճաշ չի նստավ:

Առնեք միաստեր են, թե տաճարներուն շուրջ համարակաց ճաշեր տեղին կունենային: Այսպիսի աղապներու համար իբր հոռարարձու կարգեցան յոթը սարկավագներ:

Արևմուտքի մեջ, երբ այս կարգի զոհեր տեղի կունենային, բազում զեղծումներ ու զեղանակություններ ալ տեղի կունե-

նային ու այս պատճառով եկեղեցու առաջին հայրերը ՚ Դարեն սկսան պայքարել զոհի սովորությանց դեմ ու մատաղի սովորությունները տակավ առ տակավ մրեմտյան ազգերուն մատ ջնջելով, կանգուն մնաց միայն հայոց քավ։ Ենթաս Շնորհալիին օրով մատաղի սովորությունը արդեն դադարած էր, մյուս ազգերուն քով, ու այս պատճառով «Ընդհանրական»-ին մէջ կհիշե «այլ բաղացաց քրիստոնէից ոչ ունին սովորութիւն առնել զայս»։

Առանձին օրեր սահմանված չէին մատաղին համար, բայց հայերն ըստհանրապես կընտրեին տոնական օրերը, որպեսով հրավիրողները ու հրավիրյաները կարենային միասին հավաքվիլ, ինչպես կըս Տարոնացին։

Հայաստանի մշակ դասակարգը աշնանամուտի շրջանին կընտրեր իր մատաղները ընծայլու համար, երբ բնությունը իր բարիքներով կվարձատրեր անոր աշխատությունը։

Աշնանամուտեն զատ հին հայերը ունին նման ամառային հանդեմ մալ, որ կատարելապես կհամեմատվեր հայ հեթանոսական «Ամանօրայ ամենարեր նորոց պալոց, տօնից հիւրընկալ դիցն վանատիք», կըս Աղաթանգեղոս։

Հայոց Տրդատ թագավորը, կսապաշտությունը Հայաստանեն ջնջելն վերջ իր ելքաններով Աշտիշատ եկավ, ուր գտավ Լուսալորիչը ու հոն Աստուծու գոհություն ավավ ու պատարագներ մատուցանց պաքաներու լայն բաժիններ հանելով։ Տրդատեն վերջ վահան Մամիկոնյան իր հաղթությունները փառաբաննց Դիմին մեջ ու Աստուծու շնորհակալությունը հայտնելով պատարագ կմատուցանե խեղճ աղքատներուն ալ շատ լայն ու առաս բաժիններ տալով։

Հին հրեաները ու մյուս հեթանոս աղքերը իրենց պատարագները կմատուցանեին ու ճաշեր կուտեին սրբավայրերուն մեջ։

Մատաղի ճաշերուն ժամանակ դասակարգին խորություն չըլալու համար Հավհան Մանդակունին իր հայրապետական ճառերով ժողովրդին կթելազրեր, որ խառն ճաշի նստին ու ոչ թե դասակարգ մը բաղմի գարդարված դամիթին մեջ, բակուրի դասակարգ մալ նստել ներսը վեռնի վրա։ Հայրապետը կհիշեցներ, թե «Եկաղավառը կոչանէ մէր», զոր պետք չէր եղծաներ հզոր ու անկարուա մարդոց պատիվներ շուայլելով։

«Մեծամեծ բարեկամները մեծարելու համար ունին երեք հարյուր վաթուուն և չինգ դեր, գոնէ անոնցմեն մին աղքատաց և հոգվուուդ նվիրե ճաշի կոչելով միայն որբերը, արիները, նեղյալները, տառապողները, խեղճերը, կույրերը, կաղերը, կարույրալները, գերիները, անոթիներն ու անմիտիթար խեղճ ժողովուրդը»։

Հայրապետին այս խոսքերն մեծ աղքեցություն ունեցան ու մատաղի ճաշերու ընթացքին նախ աղքատները կհոգացվեին ու վերջը միայն կարդը կուպար հարուստներուն։ Այս բարի սովորությունը շարունակեց բավական երկար չոջան մը։

Հին օրենքներուն առընթեր զելտացիները հասուկ կարլածներ չունեին ու տաճարներուն պատարագներն կկերպակըրդին։ Այսպես ալ բոլոր հեթանոս աղքերուն մեջ նույն սովորությունը կտիրեր։

Հայ քուրմերը կսնանեին զոհերեն ու պտուղներու բաժիններեն։ Երբ քրիստոնեւությունը մուտք գտավ Հայաստանի մեջ, քուրմերը վախեցան, ապրուստեն պիտի զրկվեն, բայց Լուսալորիչ զիրենք ապահովեցուց, թե զոհերեն ու պտուղներեն քահանաներուն բաժին պիտի տրվեր։

Սուրբ Սահակին կանոններուն համեմատ քահանաները իրավունք ունեին ստանալու վարդավառի, զատկի շաբաթյան, զատկի կերակին, երկրորդ զատկին ու հաջորդ բոլոր կիրակիներուն, ինչպես նաև վերափոխման արմտիքները կամ անոնց հասուլթը։ Քահանաներուն կպարտաղեր նախ նույն օրերը կատարված մատաղի

1) Փարտիցի, էջ 525,

որոշ մասը ստանալ, իսկ մյուս մասը կը-  
րաժանվեր մենաստաններուն։ Այսպես,  
քահանան կստանար մատաղ կենդանիներին  
կացիի կեսը ու ճարպին երկու մասը կթո-  
ղուր վանքին կանթեղներ վառելու հա-  
մար։ Եթե մատաղը ոչխար էր, դմակը  
վանքին կձգվեր, իսկ մյուս մասը քահանան  
կստանար։ Մասնավոր բաժինը կտրվեր  
քահանաներուն տան մեջ բնակվող պահ-  
դուխտներուն համար։ Ծնունդի, Տեառընդ-  
առաջին, Առաջավորաց պահքի ալարտու-  
մին, աղ ու հացից, Կազարոսին, Ավաղ  
Հինգշարթի, Զատկի երկուշարթիին ու  
Համբարձման տոներուն առթիվ զոհվելիք  
մատաղները պետք էր վանքերու մեջ  
դանվող ուխտավորներուն տրվեր, որոնց  
հետ կրնային քահանաները ու վանականնե-  
րը հավասարապես ուտել։ Բարեկենդանի,  
Մաղկազարդի, Առաքելոց ու Մարգարեկից  
տոներուն առթիվ մորթվող կամավոր մա-

Նիկոսիա (Կիպրոս կղզի)

տաղները դարձյալ հասարակաց Շամար  
կողոծածվեին։

Աշտարակեցիին կանոններուն մեջ  
տարբեր բաժիններու կանդիպալինք։ Պետք  
էին զվարվուր քահանաները ստանային  
մատաղին երկու ու կես մասը, իսկ մյուս  
քահանաները երկու-երկու մասերը։ Սար-  
կավադները կստանային մեկ ու կես մա-  
սը, իսկ զպիրները ու պարկեշտ այրիները  
մեկ-մեկ մասեր։

Տաթևացիին կանոնները տարբեր բա-  
ժանումներ կտնօրինեին։ Կպիսկոպոսն պետք  
էր ստանար մատաղ անաստունի կուրծքը։  
Տաներեցը պետք է առներ մատաղին աջա-  
կողմյան երին, մյուս քահանաները պետք  
էին առնել մատաղի սիրաց, երիկամունքն  
ու լերդարույծը ճարպով միասին ինչպես  
նաև ոտքերը ու զգուխուր։ Այս անդամահա-  
տությունը շատ կողմերով կնմանի Մով-  
սիսյան օրենքներուն։

(Շաբունակելի)

ՆՈՒՊԱՐ ՄԱԴՍՈՒՅԵՑՆ

